ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

24.03.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Հ.Ավետիսյանը - մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Աշրաֆյանը - մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Վ.Ղարսայանը, Ա.Մատինյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Է.Հախվերդյանը, Ա.Հակոբյանը, Գ.Բաղդասարյանը, Կ.Շեկոյանը, Ա.Բեջանյանը, Գ.Մելիքսեթյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝
Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր
Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետը շնորհավորեց մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Կ.Շեկոյանին՝ պատասխանատու պաշտոնը ստանձնելու կապակցությամբ՝ մաղթելով աշխատանքային հաջողություններ՝ ի շահ Լոռու մարզի և մարզպետի աշխատակազմի: Կ. Շեկոյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար և ընդգծեց, որ մասնագիտական կարողություններն ու փորձառությունը պատրաստ է ներդնելու իր պարտավորությունները պատշաճ իրականացնելու նպատակով:

2. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը նաև ներկայացրեց նախորդ խորհրդակցության ժամանակ տրված արձանագրային և այլ հանձնարարականների կատարման վերաբերյալ իր դիտարկումները և հանձնարարականների կատարման նկատմամբ պատասխանատու անձանց և ստորաբաժանումների ղեկավարների կողմից իրականացված աշխատանքների գնահատականը, մասնավորապես իր դժգոհությունը հայտնեց մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանի և քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության աշխատակիցների կողմից հանձնարարականների պատշաճ կարգով չկատարման, կամ ոչ պատշաճ կատարման, ժամկետների խախտման, տրված հանձնարարականներին մակերեսորեն վերաբերվելու և հաշվետվություններ չներկայացնելու վերաբերյալ:

Մարզպետն իր դժգոհությունն արտահայտեց ձյան տեղումներով պայմանավորված մասնավորապես Վանաձորում իրականացված ձնամաքրման աշխատանքների ոչ պատշաճ իրականացման վերաբերյալ՝ դիտողության արժանացնելով մարզպետի աշխատակազմի

պատասխանատու պաշտոնյաներին և Վանաձորի համայնքապետարանի համապատասխան ծառայություններին և նախազգուշացրել, որ նման գործելաոճը աններելի է, և այսուհետ այլևս չի հանդուրժվելու:

3. Մարզպետի տեղակալ Գ. Ասրյանը տեղեկատվություն ներկայացրեց գետերի հուների մաքրման վերաբերյալ՝ նշելով, որ մեկնարկել է աշխատանքների երկրորդ փուլը: Ա. Ղազարյանը հանձնարարեց ամենօրյա ուշադրության տակ պահել գործընթացը, ինչպես նաև աշխատանքային քննարկում կազմակերպել «Ձորահէկ» ՍՊԸ-ի տնօրենության հետ՝ Ձորագետի վարարման կամ ջրթողի հետ կապված հնարավոր հետևանքների կանխարգելման աշխատանքների իրականացման նպատակով:

4. Մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանը ներկայացրեց արձանագրությունով տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն, նշելով, որ տրված հանձնարարականներով իրականացված աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը չի ներկայացվել սահմանված կարգով և ժամկետում, ներկայացրեց նաև Սպիտակի մանկապարտեզ և Աշոտաբերդի դպրոց կատարած 2 շրջայցերի, հայտնաբերված թերությունների և դրանց վերացման ուղղությամբ կատարվող աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն, տեղեկացնելով, որ լրացուցիչ աշխատուժ է ներգրավվել Սպիտակի մոդուլային մանկապարտեզի շինաշխատանքներն ամենասեղմ ժամկետներում և առանց թերությունների ավարտին հասցնելու նպատակով:

Մարզպետն իր դժգոհությունն ու անհանգստությունն արտահայտեց Սպիտակի մանկապարտեզում ստացված գույքի պահպանության ոչ պատշաճ աշխատանքների իրականացման ուղղությամբ:

Ներկայացված հարցերի վերաբերյալ մարզպետը հանձնարարեց անմիջական հսկողության տակ պահել գործընթացը, մեկամսյա ժամկետում արմատական և տեսանելի ու արդյունավետ փոփոխություններ կատարել ոլորտային աշխատանքների պատշաճ կատարման, պատասխանատու և հետևողական վերաբերմունքի դրսևորման, ինչպես նաև տրված հանձնարարականների ժամկետներում կատարման ու տեղեկատվության ներկայացման ուղղությամբ:

5. Մարզպետի խորհրդական Ն.Թովմասյանը ներկայացրեց Լոռու մարզպետի հետ Վանաձորում իրականացրած շրջայցերի ժամանակ քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների լուծման ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

5.1 Մարզպետը հանձնարարեց մարզի համայնքներում բարձրացված ցանկացած հարցի լուծման ուղղությամբ իրականացնել անհրաժեշտ աշխատանքներ, տեղում ուսումնասիրել բարձրացված հարցերը պատասխանատու պաշտոնատար անձանց հետ, դրանց լուծման վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

5.2 Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ Գ.Մելիքսեթյանի հետ համատեղ ուսումնասիրել և 1-օրյա ժամկետում ներկայացնել մարզպետի համայնքային շրջայցերի, ինչպես նաև մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելությունների ժամանակ բարձրացված ցանկացած հարցի լուծման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

6. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Մատինյանը ներկայացրեց տրված հանձնարարականների և կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, որի վերաբերյալ մարզպետը հայտնեց իր դիտարկումները, մասնավորապես կարևորեց դպրոցներում՝ կրթադաստիարակչական գործընթացում իրականացվող աշխատանքները, առողջ կրթական և բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանումը, ինչպես նաև երիտասարդների ներգրավմամբ տարաբնույթ միջոցառումների կազմակերպման, մշակութային կյանքի ակտիվացման անհրաժեշտությունը:

7. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանը, առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանը, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կ.Ադամյանը, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանը, իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Գ.Բաղդասարյանը ներկայացրեցին ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

8. Մարզպետը հանձնարարեց Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյանին՝

8.1 Ներկայացնել տեղեկատվություն և առաջարկներ մարզպետարանի շենքում նախատեսվող վերանորոգման աշխատանքների վերաբերյալ.

8.2 Ներկայացնել տեղեկատվություն մարզպետարանի շենքում ցանկացած հիմքով տեղակայված տարբեր կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն:

9. Մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Կ.Շեկոյանը առաջարկեց ստորաբաժանումների ղեկավարներին ըստ ոլորտների ներկայացնել զարգացման տեսլականներ, ինչպես նաև մարզի զարգացմանը միտված հետաքրքիր գաղափարներ, ծրագրեր և նախաձեռնություններ, որոնց առնչությամբ կկազմակերպվեն քննարկումներ, կառաջարկվեն կոնկրետ խնդիրների լուծումներ:

Մարզպետը հանձնարարեց աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Մեկշաբաթյա ժամկետում զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն և առաջարկներ:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2025-03-26 15:23:57 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99